600.0236.13.06.18

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

13 հունիսի 2018 թվականի №236Ա

ք.Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2008 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի №736Ա, 2009 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2-Ի №771Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ «ՍԵԿՏՈՐ ՔՎԱՆՏ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) 2018 թվականի հունիսի 4-ին «ՍԵԿՏՈՐ ՔՎԱՆՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) դիմել է Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով), հայտնելով, որ մտադիր է Ընկերությանը պատկանող ջրագիծը, որով իրականացվում է Ընկերության «Զորագյուղ-1» և «Զորագյուղ-3» փոքր հիդրոէլեկտրակայանների ջրամատակարարումը, անհատույց հանձնել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Զորագյուղ համայնքին և շարունակել այն օգտագործել պայմանագրային հիմունքներով,

բ) Հանձնաժողովը, ի պատասխան Ընկերության դիմումի, 2018 թվականի հունիսի 6-ի գրությամբ տեղեկացրել է, որ ջրագիծը, որով իրականացվում է «Զորագյուղ-1» և «Զորագյուղ-3» փոքր հիդրոէլեկտրակայանների ջրամատակարարումը, Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Զորագյուղ համայնքին հանձնելուց անմիջապես հետո անհրաժեշտ կլինի Հանձնաժողով ներկայացնել նշված գործարքի իրականացումը հավաստող փաստաթղթեր, ինչպես նաև նշված հիդրոկառույցը օգտագործելու (հիդրոկառույցից օգտվելու) վերաբերյալ պայմանագիր կամ հիդրոկառույցին միացման թույլտվություն: Միևնույն ժամանակ, ջրագծի նկատմամբ սեփականության իրավունքը փոխանցելուց հետո «Զորագյուղ-1» և «Զորագյուղ-3» փոքր հիդրոէլեկտրակայանները կդասվեն ոռոգման համակարգերի վրա կառուցված փոքր հիդրոէլեկտրակայանների շարքին,

և, ըստ այդմ, կայաններից առաքվող էլեկտրական էներգիայի սակագինը և էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության №0307 և №0339 լիցենզիաները կվերանայվեն,

գ) 2018 թվականի հունիսի 8-ին Ընկերությունը ներկայացրել է Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի տրամադրած անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման №30052018-05-0019 վկայականը, ըստ որի գլխամասային հանգույցի և ջրագծի նկատմամբ իրավունքի փոխանցումը տեղի է ունեցել 2018 թվականի մայիսի 30-ին,

դ) «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ կետերի համաձայն՝ լիցենզավորված գործունեության իրականացման համար անհրաժեշտ հիմնական գույքը (շենքեր, շինություններ, կառույցներ, արտադրական հզորություններ, գործող էներգատեղակայանքներ և գծեր) վաճառելու կամ գույքի նկատմամբ իրավունքը որևէ այլ կերպ փոխանցելու համար լիցենզավորված անձինք նշված գործարքների իրականացման օրվանից 15 աշխատանքային օր առաջ այդ մասին գրավոր տեղեկացնում են Հանձնաժողովին,

ե) Հանձնաժողովը 2018 թվականի հունիսի 8-ից Ընկերության նկատմամբ հարուցել է վարչական վարույթ՝ «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ կետերի խախտման փաստի ուսումնասիրության նպատակով,

զ) հարուցված վարչական վարույթի շրջանակում Ընկերությունը 2018 թվականի հունիսի 8-ից հայտնել է, որ խախտման պատճառը եղել է «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի չիմացությունը,

է) հարուցված վարչական վարույթի արդյունքում փաստվել է, որ Ընկերությունը խախտել է «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ կետերի պահանջները,

և հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին կետը, 42-րդ հոդվածը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 28-րդ հոդվածի 1-ին մասը, 33-րդ և 34-րդ հոդվածները, Հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգը, Հանձնաժողովը **որոշում է.**

1. Հանձնաժողովի 2008 թվականի դեկտեմբերի 29-ի «ՍԵԿՏՈՐ ՔՎԱՆՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը «Զորագյուղ-1» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա

տրամադրելու մասին» №736Ա և 2009 թվականի դեկտեմբերի 2-ի «ՍԵԿՏՈՐ ՔՎԱՆՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը «Զորագյուղ-3» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա տրամադրելու մասին» №771Ա որոշումներում «Զորագյուղ գետի անանուն վտակի վրա» բառերը փոխարինել «Բոռբոռ-2» ոռոգման ջրագծի վրա» բառերով, իսկ «(բնական ջրահոսք)» բառերը՝ «(ոռոգման համակարգ)» բառերով:

2. «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ կետերի պահանջների խախտման համար Ընկերությանը նախազգուշացնել:

3. Ընկերությանը՝ ընդունել ի գիտություն, որ իրավասու է սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում այն բողոքարկել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից, իսկ սույն որոշման 1-ին կետի գործողությունը տարածվում է 2018 թվականի մայիսի 30-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Ռ. ՆԱԶԱՐՅԱՆ**

ք. Երևան
13 հունիսի 2018թ.